ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի մարտի 30-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/2 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել ծառայությունների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 19.11.2015թ. թիվ 1352-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-3
30.03.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/2 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 01 » դեկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Վ.Առաքելյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 30.03.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/2 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.11.2015թ. թիվ 1352-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման ժամկետը, այն սահմանելով մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Հուսալի Կամար» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Սիսիան, գ.Տոլորս
ՀՀ ֆինանսների նախարարության	«Արցախբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 22307110119800
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 09811047
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Վ.Առաքելյան**